

ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

1980

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Ինքնադիմանկար 1976 Автопортрет

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐՉԻ ՏՈՒՆ

СОЮЗ ХУДОЖНИКОВ АРМЕНИИ
ДОМ ХУДОЖНИКА АРМЕНИИ

Հայկական ՍՍՀ վաստակավոր նկարիչ

ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆ

РУДОЛЬФ ХАЧАТРЯН

Заслуженный художник Армянской ССР

Երևան 1980 Ереван

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Հայկական ՍՍՀ վաստակավոր նկարիչ Ռուդոլֆ Լորիսի Խաչատրյանի գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը կազմակերպվել է Հայաստանի նկարչի տանը 1980 թվականին:

Выставка графических работ заслуженного художника Армянской ССР Рудольфа Лорисовича ХАЧАТРЯНА организована в Доме художника Армении в 1980 году.

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Ռուդոլֆ Խաչատրյանի անունը վաղուց և լավ հայտնի է սովետահայ կերպարվեստի գիտակներին ու երկրպագուներին: Առաջին իսկ ինքնուրույն քայլերից նա ներկայացել է ազգային գրաֆիկայի աչքի ընկնող ու հետևողական վարպետներից մեկը:

Թվում է՝ Ռուդոլֆ Խաչատրյանը ծնվել է մատիտը ձեռքին: Բոլոր երեխաներն էլ նկարում են: Հետո այդ հրապուրանքը մանկության հետ անցնում է, թողնելով սոսկ միամիտ, վառ ֆանտաստիկ գույներ, որ իաճախ միայն ենթագիտակցության արդյունք են: Իր ամենավաղ շրջանի անփորձ գծանկարներում անգամ Ռուդոլֆը մտածում էր արդեն մեծի պես, իսկ տասնչորս տարեկան հասակում արած նկարները կարմանք են պատճառում՝ դասական վճիտության ու ավարտունության իրենց ձգտումով: Նկարչի ինքնամոռաց սերը Լեոնարդո դա Վինչիի արվեստի նկատմամբ գնալով ամրացել է, և մեծ իտալացու ստեղծագործությունը դարձել է նրա կյանքի ուղեցույց աստղը:

Որոշակի մի շրջանում, սանգինով կատարած սքանչելի դիմանկարներում իրեն վգացնել է տվել և Ռեմբրանդտի ազդեցությունը: Այստեղ արդեն Ռուդոլֆը պակաս ուշադրություն է դարձնում մանրամասներին, գծանկարները ձեռք են բերում թեթևություն և և նրբագեղ էքսպրեսիա:

Վիեննայում ցուցադրված գրաֆիկական դիմանկարը Ռոդոլֆին բերեց երիտասարդական համաշխարհային փառատոնի դափնեկրի կոչում: Նա քսաներկու տարեկան էր...

Դասական արվեստը դառնում է երիտասարդ արվեստագետի միակ դպրոցն ու կշեռքը. չէ որ նա փաստորեն չի ուսանել ոչ մի գեղարվեստական հաստատությունում: Հասկանալի է՝ սա կանոն չէ, այլ բացառություն և տվյալ դեպքում, երջանիկ, հաջող բացառություն:

Այսպիսով, Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործական դավանանքը որոշվել է հենց սկզբից, թեև, իհարկե, եղել են նաև որոշ շեղումներ...

60-ականների սկզբին Հայաստանի գեղարվեստական կյանքը ակտիվորեն ներխուժած լայն, համապարփակ ինֆորմացիայի ալիքը չշրջանցեց և Ռուդոլֆ Խաչատրյանին: Նկարիչները պապակած ճամփորդների պես, հասկանալով, թե առանց հասկանալու, «վրա ընկան» վաղուց գոյություն ունեցող, վաղուց հաս-

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

տատված ուղիների «որոնմանը »:Այս քառսում անհնար էր խուսափել ընդօրինակումից, իսկ երբեմն էլ ուղղակի փոխառնումից: Հավանաբար, ստեղծված խառնաշփոթի մեջ կար որոշակի օրինաչափություն, կարծրացած ստանդարտ պատկերացումների շրջանակից դուրս պրծնելու ձգտում, կյանքի տեմպերից, ժամանակակից համաշխարհային արվեստի նվաճումներից ետ չմնալու ցանկություն: Մաճառի պես այդ որոնումները եռում էին, եռում, երբեմն վերածվելով մաքուր ու թունդ անարատ գինու, իսկ ավելի հաճախ՝ քացախի: Անշուշտ, ամեն ինչ որոշվում է տաղանդի ու կազմակերպվածության աստիճանով: Չէ որ առհասարակ քիչ չեն շնորհալի, դյուրահաղորդ մարդիկ, իսկ ահա նրանք, որ ընդունակ են հաստատելու սեփական դիրքերը, հարապատ մնալու իրենց, առանց քաշվելու և ընկրկելու, չափազանց սակավ են: Սրանք այն հատկանիշներն են, որ, թերևս, առավել արժեքավոր են տաղանդի կազմավորման համար:

Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստում նկատվել են ամենակտրուկ թռիչքներ ու դեգերումներ, սյուրռեալիզմից մինչև կուբիզմ, սակայն տասնչորսամյա պատանու նկարները, որ հաճախ էին հանվում թղթապանակից, հիշեցնում էին իրենց մասին ոչ առանց կշտամբանքի: Եվ, այնուհանդերձ, այդ անկուսակ դեգերումների մեջ զգացվում էր նոր խնդիրների լուծումը փորձելու ձգտում ու խիզախություն: Անտարակույս, այս ամենը որոշակի օգուտ տվեց՝ ընդլայնելով տեսադաշտը, վերջնականապես հաստատելով նկարչի հետագա զարգացման ճշտությունը:

Անցան տարիներ, և ուլտրաժամանակակից հայ նկարիչներից մեկը սկսեց ստեղծել ռեալիստական ստեղծագործություններ՝ հետևողականորեն դիմելով բնորդի: Այստեղ հարկ է մի վերապահում անել: Տողերիս հեղինակը ոչ մի գըրվածքում և առհասարակ իր ողջ մտածողությամբ նվավագույն իսկ չափով չի հերքում ձևի էվոլյուցիան և ուղիների եռանդագին որոնումը արվեստում: Վերն ասածը առաջին հերթին վերաբերում է արվեստագետի ակնվությանը, խղճին, նվիրվածությանը սեփական իդեալներին: Ռուդոլֆ Խաչատրյանը հանգեց իր ուղուն: Ի՞նչ է սա: Փախո՞ւստ, նահա՞նջ դիրքերից, թուլության նշա՞ն, թե՞, ընդհակառակը՝ ուժ, կամքի ու հավատի հաստատում: Համոզված եմ՝ վերջինը:

Դիտելով վերջին տարիների մատիտանկար դիմանկարները հիշում ես նկարչի պատանեկան գործերը՝ արված երեխայական անհամբերության ու մանկամտության իսպառ բացակայությամբ: Ընդհակառակը, այն տպավորությունն ես ունենում, թե դրանց հեղինակը երբեք էլ երեխա չի եղել ու հենց սկզբից էլ դատել է հասուն նկարչի պես: Սակայն եթե վաղ գործերում նպատակը սահմանափակվել է արհեստը ճանաչելու ձգտմամբ և, անկեղծ ասած, վիրտուոզ «աշակերտության» տակ թաքնված որևէ հանելուկ չես տեսնում, ապա նոր փուլում, որ բնորոշ է նրա վերադարձով սկզբնական դավանանքին, մենք արդեն գործ ունենք գրաֆիկայի հասուն վարպետի հետ, որի համար գծանկարն ինքը հենց բուն ստեղծագործությունն է, բուն արվեստը, ավարտուն երկը:

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Արվեստում միշտ էլ դժվար է եղել ակնիվ, հետևողական ու սկզբունքային լինելը: Վիթխարի ինֆորմացիան, որ մրրիկի պես տառացիորեն փլվում է յուրաքանչյուրիս վրա, ծանր բեռ է, և ամեն ոք չի կարող տանել: Կայուն դիրքորոշման բացակայությունը հանգեցնում է վավեշտի, իսկ ոչ սակավ նաև անհեթեթության: Կարճ ասած, մեր օրերում, ինչպես և բոլոր ժամանակներում, ծնվում են անհատականություններ, սակայն այսօր, առավել քան երբևէ, դժվար է պահպանել ինքնուրույնությունը: Մի կողմից՝ մոդայիկ, կոնյուկտուրային գայթակղությունները, մյուս կողմից՝ համաշխարհային մշակույթի դարերով կուտակված ինֆորմացիայի բեռը, որոնց ծանրթանալիս կարող է թվալ, թե ամեն ինչ վաղուց ասված է ու արված... Կյանքի իրարանցման մեջ մարդ կարող է կորցնել սեփական ամեն ինչ՝ դառնալով կցորդը վիթխարի արագությամբ սլացող այն արկի, որ կոչվում է 20-րդ դար:

Ամենը, ինչ-որ տաղանդավոր է ու ինքնատիպ, ընդունելի է արվեստում: Նկարիչը որքան իրեն ապատ ու ստույգ արտահայտի, այնքան նրա ստեղծածն արժեքավոր կլինի հասարակության համար: Արվեստագետի ձեռագիրն ու մեթոդը միայն նրա կամքի գործերը չեն, այլ ավելին՝ նրա ստեղծագործական անհատականության բնությունն են ու էությունը: Մաքրությունը, ճշմարտությունն ու անկեղծությունն են, որ մեզ են հասցրել հեռու դարերի ջունչը:

Այս ոչ մեծ մենախոսությունը քնարական կեղում չէ: Ընդհակառակը, անմիջապես կապված է մեր խոսակցության բուն նյութի ու թեմայի՝ հայ գրաֆիկ նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործության հետ:

Բոլոր ժամանակներում մարդիկ, բնական է, ենթադրել են, որ իրենց դարաշրջանն առանձնահատուկ է: Փոխվել են աշխարհահայացքները, չափանիշները, համակարգերն ու հասարակարգերը, իսկ արվեստի արժեքն ամեն ինչից վեր որոշվել է միշտ որակով: Ահա հենց այս հատկանիշն է մերձեցնում ամենահակադիր միտումների գեղարվեստական իրողությունները՝ միավորելով դրանք համաշխարհային մշակույթ հասկացության տակ: Այսպես թե այնպես, բոլոր դարաշրջաններում գոյություն են ունեցել առավել հուլականն ու էքսպրեսիվը, ինչպես նաև՝ սևեռուն, մանրակրկիտ մտածողությունը: Ամեն ինչ որոշում է տաղանդը:

Այն, որ Ռուդոլֆ Խաչատրյանը տաղանդավոր է, պարզ դարձավ համարյա նրա առաջին աշխատանքներից՝ արված պատանի հասակում: Բայց չափազանց դժվար պիտի լիներ գուշակել, թե ինչպես կընթանար պատանի նկարչի հետագա զարգացումը, ընդ որում՝ ինչպես դիտողի, այնպես էլ, ինչպես հետո պարզվեց, հենց իր՝ Խաչատրյանի համար: Ահա այստեղ է, որ իր խոսքն ասաց անհատի պայքարը ինֆորմացիայի և ժամանակի այլ գայթակղությունների դեմ: Այնուհանդերձ, եթե հետևենք Ռուդոլֆ Խաչատրյանի անցած ողջ ճանապարհին, դժվար չի լինի ըմբռնել՝ որտեղ է ճշմարիտը և որտեղ օտարածինը, որից նա

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

կարողացավ ի վերջո ավատագրվել և վերջնականապես հաստատել արվեստագետի դավանանքը: Ինչ-որ մի փուլում կորցրած անբասիր «ես»-ը, որ թաքնվել էր հոգու անձուկ մի անկյունում, հաղթանակեց, հաստատվեց ամուր և արդեն ընդմիշտ: Նրա հոգու դռները բաց են, բայց ամենքը չէ, որ մուտք ունեն այնտեղ. նրա գրաֆիկական երկերի թվացյալ մատչելիությունը, ուր պարզամիտներին հրապուրում է և վարմացնում սոսկ արհեստը, միամիտ ու վիրավորական է արվեստագետի և նրա ձիրքի երկրպագուների համար: Սակայն ինչպես հին վարպետների գործերն են բավականին երկար ուշադրությունդ գամում, այնպես էլ Ռուդոլֆ Խաչատրյանի նկարներն են պահանջում առավել խորաթափանցություն:

Ռուդոլֆ Խաչատրյանի գրաֆիկական ստեղծագործությունները ամենից քիչ պիտի դիտվեն իբրև հղկված տեխնիկայով պատրանքայնության, պաթոլոգիկ նրբացվածության հասնելու, այնպես էլ սեփական ճարտարությամբ ապշեցնելու ձգտում: Դրանք նախ և առաջ հավատի և հոգևոր ուժի դրսևորումներ են: Խորությամբ և կատարման վարմանալի վարպետությամբ հիացնում են ինքնադիմանկարները (1972, 1976), «Կնոջ դիմանկարը» (1973), «Ձկներով և տխով նատյուրմորտը» (1976), «Հայ լեվվաբանի դիմանկարը» (1976): Առանց չափազանցության ու բռնապբոսիկ գերագնահատման, դրանք կարելի է անվանել գրաֆիկական արվեստի գլուխգործոցներ: Դրանք մաքուր են ու կատարյալ:

Ոչ մի արվեստագետ չպետք է պատկերի այն, ինչը խորթ է իր աշխարհընկալմանն ու աշխարհայացքին: Ոչ մի քննադատ իրավունք չունի գրել այն արվեստագետի մասին, որը նրան չի հուզում:

Հակառակ պարագայում կտուժի ճշմարտությունը. խոսքը ոչ միայն կարողության, այլև ավնվության մասին է: Ցավոք, այս ցուցահանդեսում ներկայացվելիք ոչ բոլոր աշխատանքներն են հայտնի տողերիս հեղինակին: Հիմա, երբ գրվում է այս նախաբանը, դրանք հայտնի չեն նույնիսկ իրեն՝ նկարչին և հասունանում են նրա ենթագիտակցության մեջ: Սակայն կասկած չկա, որ դրանցից լավագույնները արժանի կլինեն արվեստին:

Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործությունները հագեցված են խորը արտիստականությամբ, որ մերժում է արտաքին վարպետությունն ու ճարտարախաղը: Այստեղ առկա է մի կայունություն, որ տանում է ոչ թե դեպի միալարություն, այլ անվերջ ներթափանցում առարկայի բնության խորքը: Հաճախակի ցատկռտուքը տեղից-տեղ, մտակենտրոնացման բացակայությունը գալիս են «ստեղծագործական որոնումներով» քողարկվող անկարողությունից: Ռուդոլֆ Խաչատրյանի համար որոնումների ժամանակն անցել է, նրա արվեստում եկել է ժամը հաստատելու այն, ինչին խորապես հավատում է: Իսպառ մի կողմ են վանվել պատահականությունը, տարերայնությունը, իմպրովիզացիան: Խորացումը սեփական անձի ու բնորդի էության մեջ դարձել է նրա արվեստի գլխավոր հատկանիշը:

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Գրաֆիկան Ռուդոլֆ Խաչատրյանի համար ինչ-որ օժանդակ, կիրառական բան չէ: Նա սահմանափակվում է մատիտով ու թղթով՝ ոչ թե ուրիշ նյութերի տիրապետելու անկարողությունից, նյութեր, որոնք այսօր շատ-շատ են կերպարվեստում, այլ կրկին ու կրկին սեփական զգացմունքները լիակատար կերպով արտահայտելու ձգտումից, նյութ, որ պահանջում է սպառիչ դրսևորում պարզ շարադրման մեջ, մերժելով էֆեկտավոր պոռթկումները: Ռուդոլֆ Խաչատրյանի լավագույն գրաֆիկական աշխատանքների լրջությունն ու նշանակալիությունը դիտողից պահանջում է ակնդետ հայացք, ստիպում է հարգել գրաֆիկայի արվեստը:

Նա ավերման կողմնակից չէ: Նա ներկայացնում է այն ուղղությունը, որը կտում է պատկերելիքը մինչև առարկայի բացարձակ բյուրեղացում, և այդ ճանապարհը նույնքան անսահման է, որքան բնորդի վերացարկումը: Նկարիչը որքան շատ է հեռանում տեսանելի բնության տարրական ընթերցումից, այնքան ավելի է դրսևորվում նրա մասնակցությունը նյութի փոխակերպմանը: Որքան էլ դա տարօրինակ թվա, վերացարկումը արտահայտվում է ոչ միայն աբստրակցիայի, այլև բնորդի, նատուրայի բյուրեղացման մեջ՝ ընդհուպ մինչև ծայրաստիճան մաքրապատում: Ավելի պարզ ասած՝ արվեստը երկու բևեռ ունի և ոչ թե մեկ, ինչպես թվում է մեր օրերի շատ նկարիչներին ու արվեստաբաններին: Եվ բնական է, տեսողությամբ ընկալվող առարկայի տեղաշարժումը դեպի այս կամ այն բևեռը պահանջում է կատարելություն: Որքան նատուրայի տեսանելի նյութականությունը կենտրոնից հեռու է, այնքան ավելի ակտիվ է ստեղծագործության չափը:

Ռուդոլֆ Խաչատրյանն իսպառ մերժում է սյուժետայնությունը, պատմողականությունը, որոնք հաճախ դառնում են հանդիսատես գրավելու նեցուկ և ուղեկցող միջոց: Նման մոտեցումը պարտավորեցնում է անսահման մաքրություն, պահանջում արիություն ու վարպետություն: Հրաժարումը կուրյոզներից, էֆեկտներից ու կեղծ բացառիկությունից քչերին է տրված: Յուրաքանչյուր գեղարվեստական տեսակետ՝ նոր թե հին, իրական է լոկ այն ժամանակ, երբ գտնում է ճշմարիտի նորանոր հաստատումներ: Այս դեպքում արվեստագետը միշտ նորարար է:

Նատուրայի վերարտադրման ողջ ճշգրտությամբ հանդերձ, Ռուդոլֆ Խաչատրյանը ոչ միայն չի խուսափում «ճշգրտություն» տերմինից, այլ ընդհակառակը, նախանձախնդիր, մինչև արտևանունքները նկարելու աստիճան հաստատում է այն, քանի որ շատ հեռու է նատուրալիստական ու լուսանկարչական վավերացումից: Հնարավոր է, որ նման պնդումը թվա փոքր-ինչ պարադոքսալ:

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Սակայն, բանն իրոք այդպես է, քանի որ նկարչին հուզում են լույսի, ստվերի պրոբլեմների, թանձր ու միաժամանակ հապիվ նշմարելի գծերի կուգորդումը: Արվեստագետը չի դիմում գույնի: Միգուցե նա օժտված էլ չէ գունանկարչի ձիրքով: Սակայն այստեղ բացը դարձել է առավելություն. նրա գրաֆիկայում այնքան որոշակի դեր է կատարում երանգը, որ ասես կգում ես գույնը:

Ռուդոլֆ Խաչատրյանը էֆեկտներ չի որոնում և ամենից շատ ձգտում է որակի: Նրա նկարները մեկը մյուսից կատարյալ են ճշմարտությամբ, մաքրությամբ: Գծանկարից ասես ներքին լույս է հորդում: Նկարչի համար հավասարապես հետաքրքիր ու նշանակալից են թե սոխը, թե կոճակը, թե մազաթելը, թե նկարվողի աչքերը. ամենին նա վերաբերում է միևնույն սիրով և ուշադրությամբ: Խաչատրյանի գրաֆիկական երկերում ամենագլխավորը շեշտն է: Դա հենց այն գործոնն է, որ չի բավականացնում շատ, նույնիսկ լավ, ավելի ճիշտ՝ գրագետ գծանկարիչների: Շեշտի ճշգրտությունն ու դիպուկությունը, գծի վորեղացումը կամ թուլացումը Ռուդոլֆ Խաչատրյանի նկարներին մի հատուկ նրբագեղություն են հաղորդում: Նրան հատուկ են առարկա, գեղեցկության առարկա ստեղծելու կարողությունը, մշտական ձգտումը՝ հաղթահարել անհասանելի արգելապատնեշը: Չէ՞ որ շատ նկարիչների շտապողականության ու «կտրիճության» տակ հաճախ պահված է քանակական կուտակման ձգտումը, որն, ավաղ, միշտ չէ, որ հանգեցնում է որակի, մշտական արժեքի ստեղծման:

Բնության գաղտնիքը ակնթարթների անվերջանալիության, նրանց անսպառության մեջ է: Կարելի է սանգինով արագ ու վիրտուոզ նկար ստեղծել: Բայց ավելի բարդ խնդիր է, մաքրությունը պահպանելով, տևական նկարասեանսների հուզական լարվածությանը դիմանալը՝ առանց ռետինի դիմելու: Քսան երեսուն սեանսի ընթացքում ծագում են հակապես լարված հուզական ակնթարթներ: Դրանց տոկոսային կուտակումը նկարչի ամենամեծ երազանքն է: Վերջին հաշվով, հենց այդ կուտակման շնորհիվ է ծնվում կատարյալը արվեստում: Այստեղ բավական չեն բնազդն ու արհեստը: Բանը «աստվածային» հաղորդակցումն է բնության հետ, օրգանական միաձուլումը նրան, երբ սեփական «ես»-ը չի համահարթվում, չի կորչում, այլ ընդհակառակը՝ հաստատում է նոր մատերիայի ծնունդը, որն արդյունք է մարդու բանականության. մի հանելուկ, որ պատկանելու է հավիտենությանը:

ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹՅԱՆ

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Имя Рудольфа Хачатряна давно и хорошо известно всем знатокам и поклонникам армянского искусства. С первых же самостоятельных шагов он заявил о себе как один из наиболее видных и последовательных мастеров национальной графики.

Рудольф Хачатрян кажется родился с карандашом в руках. Рисуют многие дети, впоследствии это увлечение уходит вместе с детством, сохраняются лишь наивные, яркие, фантастические краски, чаще являющиеся продуктом интунции. С самых ранних неумелых зарисовок Рудольф уже мыслил как взрослый, а его рисунки, сделанные в четырнадцатилетнем возрасте, и поныне поражают стремлением к классической чистоте и завершенности. Его фанатическая любовь к Леонардо да Винчи с годами укрепилась и творчество великого итальянца на всю жизнь стало путеводной звездой Рудольфа Хачатряна. На определенном этапе сказалось увлечение Рембрандтом в великолепно исполненных портретах в технике сангины. Здесь уже меньше внимания уделяется деталировке, рисунок приобретает легкость и изящную экспрессивность. Графический портрет, экспонированный в Вене, принес Рудольфу Хачатряну звание лауреата Всемирного фестиваля. Ему было двадцать два года. Классика стала его единственной школой и критерием, ведь фактически он не учился ни в одном художественном заведении. Разумеется, это не правило, а исключение и в данном случае исключение счастливое, удачное. Таким образом, творческое кредо Рудольфа Хачатряна определилось с самого начала, хотя и у него были некоторые отклонения.

Внезапная волна широкой всеохватывающей информации, активно вторгнувшаяся в художественную жизнь Армении в начале 60-х годов, не обошла и Рудольфа Хачатряна. Художники, понимая—непонимая, бросились на «поиски» давно существующих и утвердившихся путей. В

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

этом хаосе невозможно было избежать подражания, а порой и прямого плагиата. Вероятно, в создавшейся суматохе была определенная закономерность, желание вырваться из круга стандартных, окаменевших представлений, желание не отстать от темпов жизни, от достижений современного мирового искусства. Подобно молодому вину, все эти поиски бродили, бродили, иногда превращаясь в чистое крепкое натуральное вино, чаще же в плохой уксус. Очевидно, все определялось степенью талантливости и организованности личности. Ведь людей способных, восприимчивых немало, а умеющих утвердить свои позиции, без стеснения остающихся самими собой весьма и весьма мало. Это качество едва ли не одно из самых ценных в становлении таланта.

В творчестве Рудольфа Хачатряна наблюдались самые резкие скачки и метания от сюрреализма к кубизму, но рисунки четырнадцатилетнего мальчика, часто появляющиеся из папки, напоминали о себе с некоторым упреком. Тем не менее в безудержных метаниях сказывались смелость и стремление использовать решение новых задач. И несомненно, определенная польза от этого все же была, они расширили кругозор, окончательно убедили в правильности последующего развития художника.

Прошли годы, и один из ультрасовременных армянских художников стал создавать реалистические произведения, пользоваться натурой. Здесь необходимо оговориться. Ни в данном тексте, ни вообще автор этих строк ни в коей степени не отрицает вообще эволюцию формы и самые активные поиски новых путей в искусстве. Сказанное выше, прежде всего, относится к честности, совести художника, к его преданности собственным идеалам. Рудольф Хачатрян к этому пришел. Что это? Бегство, отход от позиций, демонстрация слабости или, наоборот— сила, утверждение воли и веры? Убежден, что последнее.

Глядя на портреты, нарисованные карандашом за последние годы, вспоминаешь те детские драпировки, сделанные с недетским терпением и отсутствием какого-либо проявления инфантильности. Напротив, складывается впечатление, что их автор никогда не был ребенком и с самого начала мыслил как взрослый художник. Но если в ранних рисунках цель ограничивается стремлением познать ремесло, и, откровенно говоря, за виртуозной штудировкой не ощущаешь никакой загадки, то на новом этапе, характеризующемся возвращением к первоначальному кредо, мы уже имеем дело со зрелым мастером графики, для которого рисунок — само творчество, само искусство, законченное произведение.

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

В искусстве всегда было трудно остаться честным, последовательным и принципиальным. Колоссальная информация, буквально обрушивающаяся шквалом на каждого человека—тяжелое бремя, которое не каждый способен вынести. Отсутствие твердых позиций приводит к курьезам, а нередко и к абсурду. Короче, в наши дни, как и во все эпохи, рождаются личности, но сейчас, более, чем когда-либо, человеку трудно сохранить индивидуальность. С одной стороны ряд соблазнов модных, конъюнктурных, с другой—груз информации, накопление многовековой мировой культуры, при ознакомлении с которой может показаться, что все и вся исчерпано. Суета сует способна изжить из человека все собственное, сделать его придатком несущегося с чудовищной скоростью снаряда, именуемого XX веком.

В искусстве приемлемо все, что талантливо, самобытно. Чем свободнее и точнее художник себя выражает, тем ценнее созданное им для общества. Манера и метод художника не только дело его воли, более того, оно естество и сущность творческого индивидуума. Фальшь ни в кои времена не приживалась. Чистота, правдивость и искренность донесли до нас дыхание далеких веков. Этот маленький монолог не является лирическим отступлением, напротив, он непосредственно связан с предметом нашей темы, с творчеством армянского графика Рудольфа Хачатряна.

Во все времена люди естественно полагали, что их эпоха особенная. Менялись мировоззрения, эталоны, системы, формации, но ценность искусства помимо всего прочего, всегда определялась качеством, именно этот фактор роднит самые противоположные по тенденциям произведения искусства и объединяет их в понятие мировой культуры. Так или иначе, во все эпохи существовало более эмоциональное экспрессивное и сосредоточенное скрупулезное мышление, опять таки мы не станем проявлять тенденциозности ни к тому, ни к другому. Все определяет талант!

О том, что Рудольф Хачатрян талантлив, стало известно чуть ли не с первых рисунков, сделанных им в детстве. Но весьма трудно было предугадать, каким будет дальнейшее развитие юного художника—причем не только зрителям, но как показало дальнейшее, и ему самому. Вот здесь и сказалась борьба личности с информацией и прочими соблазнами времени. Тем не менее, если проследить весь путь, пройденный Рудольфом Хачатряном, нетрудно понять где истина, а где чуже-

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

родное, от которого он сумел избавиться и окончательно утвердить свое художническое кредо. Утерянное на каком-то этапе чистое «я», скрывающееся где-то в глубине души, победило, утвердилось прочно и уже навсегда. Душа его обнажена, открыта, но далеко не каждый вхож в нее: кажущаяся доступность его графических произведений, в которой простота привлекает и удивляет лишь ремесленная сторона, наивна и оскорбительна для художника и поклонников его таланта. Но, как произведения старых мастеров приковывали внимание надолго, так и рисунки Рудольфа Хачатряна требуют более глубокого проникновения.

Графические произведения Рудольфа Хачатряна менее всего должно рассматривать как стремление к иллюзионизму при помощи отточеной техники, паталогической изощренности, или как стремление поразить маэстрией. Это, прежде всего, проявление веры и духовной силы. Поражают глубиной и удивительным мастерством исполненные автопортреты (1972—1976), портрет жены (1973), натюрморт с рыбами и луком (1976), портрет армянского лингвиста (1976). Без преувеличения и натяжки их можно назвать шедеврами графического искусства, они чисты и совершенны.

Ни один художник не должен изображать то, что чуждо его мировоззрению и мировосприятию, ни один критик не имеет права писать о художнике, который его не волнует, в противном случае пострадает истина—речь идет не только об умении, но и о честности. К сожалению, не все работы, которые будут представлены на данной выставке, известны автору этих строк, они не известны даже самому художнику и хранятся где-то в подсознании. Однако не вызывает сомнения, что лучшие из них будут достойны Искусства.

Произведения Рудольфа Хачатряна преисполнены глубокого артистизма, отрицающего внешнюю маэстрию и виртуозность. Стабильность ведет не к монотонности, а к бесконечному проникновению вглубь природы вещей. Частое перескакивание, отсутствие сосредоточенности нередко возникают от бессилия, прикрывающегося «творческими исканиями». Для Рудольфа Хачатряна время творческих поисков позади, в его искусстве настала пора того, во что он глубоко верит. Случайность, стихийность, импровизация начисто отметены в сторону, углубленность в себя и в натуру, проникновение в суть—главная особенность его творчества. Графика для Рудольфа Хачатряна не есть нечто вспомогательное, прикладное, он ограничивается бумагой и карандашом не от неумения работать с другими материалами, которыми сегодня изобилует изо-

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

бразительное искусство, а опять-таки от желания полнее выразить свои чувства в аскетическом материале, требующем полной отдачи, в чистом изложении, отвергающем эффектные всплески. Серьезность и значительность лучших графических произведений Рудольфа Хачатряна требует от зрителя пристального взгляда, заставляет уважать искусство графики. Он не сторонник разрушения, он представитель того направления, которое очищает изображаемое, добиваясь абсолютной кристаллизации предмета, и этот путь также бесконечен, как абстрагирование натуры. Чем дальше художник отходит от элементарного прочтения видимой природы, тем больше проявляется его участие в преобразовании материи. Как это ни парадоксально, абстрагирование проявляется не только в абстракции, но и в очищении натуры до крайней стерилизации предмета. Говоря проще, искусство имеет два полюса, а не один, как кажется многим художникам и критикам нашего времени. И, естественно, отдаление от визуально воспринимаемого предмета к каждому полюсу требует совершенства, чем отдаленнее от центра видимой материальности натуры, тем активнее доза творчества.

Рудольф Хачатрян совершенно отрицает сюжетность, повествовательность, которые нередко являются подпоркой и сопутствующими средствами для привлечения зрителя. Подобное начало обязывает к беспредельной чистоте, требует мужества и мастерства. Каждая художественная концепция, будь она новой или старой, реальна лишь тогда, когда находит новые подтверждения истины. В этом случае художник всегда является новатором.

При всей точности передачи натуры, Рудольф Хачатрян не только избегает термина «точность», напротив, ревностно, до ресничек, утверждает его, поскольку он очень далек от натуралистичности и фотографической фиксации. Возможно, такое утверждение звучит несколько парадоксально, однако это именно так, ибо его волнуют проблемы света, тени, сочетание сильной и одновременно едва уловимой линии. Художник не прибегает к цвету, может быть он и не наделен даром колориста, но здесь минус оказался плюсом: в его графике словно ощущается цвет, настолько определяющую роль выполняет тон.

Рудольф Хачатрян не ищет эффектов и более всего стремится к качеству. Каждый его рисунок все совершеннее в своей истине, чистоте, он словно излучает внутренний свет. Для художника одинаково интересны, значительны и лук, и пуговица, и волосок, и глаз портретируемого — ко всему он относится с одинаковой любовью и вниманием.

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Самое главное в графических произведениях Рудольфа Хачатряна — акцент, это именно тот фактор, которого не хватает многим, даже хорошим, вернее, грамотным рисовальщикам. Верность и точность акцента, усиление и ослабление линии придают рисункам Рудольфа Хачатряна особое изящество. Ему присуще умение создавать вещи, предметы красоты, постоянное стремление перейти за барьер недосягаемости. Ведь у многих художников за поспешностью и лихачеством нередко скрывается желание количественного накопления, увы, не всегда приводящее к качеству, созданию непреходящей ценности.

Тайна природы и нескончаемости мгновений, в их неисчерпаемости. Можно сангиной сделать быстрый виртуозный рисунок, но выдержать эмоциональное напряжение в течение длительных сеансов, совершенно не прибегая к резинке, сохраняя чистоту—задача сложная. За двадцать, тридцать сеансов возникают особо напряженные эмоциональные мгновения. Процент их накопления — самая большая мечта художника, в конечном итоге именно в результате этого накопления и рождается совершенство в искусстве. Здесь недостаточно интуиции и ремесленного начала, суть — в божественном соприкосновении с природой, в органичном слиянии с ней, при котором собственное «я» нивелируется, не теряется, а, напротив, утверждает рождение новой материи, являющейся результатом разума человека, становящейся загадкой, принадлежащей вечности.

Генрих ИГИТЯН

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

ՎԵՐԱՏՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ
РЕПРОДУКЦИИ

2—373

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Ինքնադիմանկար 1972 Автопортрет

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Նկարչի դուստրը 1971 Портрет дочери

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Կինոօպերատոր Սերգեյ Ֆիլիպովը 1972 Кинооператор Сергей Филиппов

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Դերասանը 1971 Актер

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Նկարչի կնոջ դիմանկարը (դրվագ) 1973 Портрет жены (фрагмент)

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Նկարչի կնոջ դիմանկարը 1973 Портрет жены

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Ձկներով նատյուրմորտ 1972 Натюрморт с рыбами

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Երիտասարդություն 1973 Молодость

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Մարիամիկը պատուհանի մոտ 1972 Мариамчик у окна

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Երիտասարդի դիմանկար 1973 Портрет молодого человека

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Ծեր հրեուհու դիմանկար 1973 Портрет старой еврейки

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Կնոջ դիմանկար 1973 Женский портрет

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Տանձեր 1973 Груши

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Մաշան 1973 Маша

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Ձկներով նատյուրմորտ 1976 Натюрморт с рыбами

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Կիսադեմ 1973 Профиль

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



ծամով աղջիկը 1974 Девушка с косой

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Երիտասարդություն 1974 Молодость

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Դերասան Ե. Եվստիգնեևի դիմանկարը 1975 Портрет актера Е. Евстигнеева

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Վերայի դիմանկարը 1974 Портрет Веры

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Աղջկա դիմանկար 1975 Портрет девушки

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Սևա 1974 Сева

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Թղթե հրեշտակով նատյուրմորտ 1976 Натюрморт с бумажным ангелом

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Դերասանուհի Նատալյա Սայկոյի դիմանկարը 1976

Портрет актрисы Натальи Сайко

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Ծաղիկներ 1976 Цветы

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Սալոմե 1977 Саломея

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Մերկ կինը 1976 Обнаженная

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Հուդիթ 1976 Юдифь

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Լեվաբան Մ. Մելքումյանի դիմանկարը 1977 Портрет лингвиста М. Мелкумяна

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Աբու Լալա Մահարի (Ավ. Իսահակյանի պոեմի մոտիվներով) 1978

Абу Лала Маари (По мотивам моэмы Ав. Исаакяна)

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Ֆրանչեսկան 1978 Франческа

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Հովհաննեսը 1978 Ованес

4—373

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Աղջկա դիմանկար 1977 Портрет девушки

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Պարմանուհի 1978 Юная

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Անատոլի Բոչարովի դիմանկարը 1978 Портрет Анатолия Бочарова

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en



Կինոռեժիսոր Մ. Շվեյցերի դիմանկարը 1978 Портрет кинорежиссера М. Швейцера

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Կնոջ դիմանկար 1977 Женский портрет

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

ՆԿԱՐԱՑԱՆԿ
КАТАЛОГ

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

1971

ԴԵՐԱՍԱՆԸ
Թուղթ, մատիտ, 18×19

ՆԿԱՐՉԻ ԴՈՒՏՐԸ
Թուղթ, մատիտ, 33×25,5
(ՍՍՀՄ նկարիչների միության ֆոնդ)

1972

ԿԻՆՈՕՊԵՐԱՏՈՐ ՍԵՐԳԵՅ ՖԻԼԻՊՈՎԸ
Թուղթ, մատիտ, 42×34
(ՍՍՀՄ նկարիչների միության ֆոնդ)

ՄԱՐԻԱՄԻԿԸ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՄՈՏ
Թուղթ, մատիտ, 42×34
(Ա. Դեմիդովայի սեփ., Մոսկվա)

ՁԿՆԵՐՈՎ ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ
Թուղթ, մատիտ, 45×30
(ՍՍՀՄ նկարիչների միության ֆոնդ)

ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ
Թուղթ, մատիտ, 40×35

1973

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԴԻՄԱՆԿԱՐ
Թուղթ, գուն. մատիտ, 15×14

ՆԿԱՐՉԻ ԿՆՈՋ ԴԻՄԱՆԿԱՐԸ
Թուղթ, մատիտ, 42×36

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ
Թուղթ, մատիտ, 38×34

ԿՆՈՋ ԴԻՄԱՆԿԱՐ
Թուղթ, մատիտ, 22,5×21,5
(ՍՍՀՄ նկարիչների միության ֆոնդ)

ԾԵՐ ՀՐԵՈՒՀՈՒ ԴԻՄԱՆԿԱՐ
Թուղթ, մատիտ, 10×12

ՄԱՇԱՆ
Թուղթ, մատիտ, 17×15

ՏԱՆՁԵՐ
Թուղթ, մատիտ, 34×30

ԿԻՍԱԴԵՄ
Թուղթ, մատիտ, 14,5×13

1971

АКТЕР
Бумага, карандаш, 18×19

ПОРТРЕТ ДОЧЕРИ
Бумага, карандаш, 33×25,5
(Фонд Союза художников СССР)

1972

КИНООПЕРАТОР СЕРГЕЙ ФИЛИППОВ
Бумага, карандаш, 42×34
(Фонд Союза художников СССР)

МАРИАМЧИК У ОКНА
Бумага, карандаш, 42×34
(Соб. А. Демидовой, Москва)

НАТЮРМОРТ С РЫБАМИ
Бумага, карандаш, 45×30
(Фонд Союза художников СССР)

АВТОПОРТРЕТ
Бумага, карандаш, 40×35

1973

ПОРТРЕТ МОЛОДОГО ЧЕЛОВЕКА
Бумага, цв. карандаш, 15×14

ПОРТРЕТ ЖЕНЫ
Бумага, карандаш, 42×36

МОЛОДОСТЬ
Бумага, карандаш, 38×34

ЖЕНСКИЙ ПОРТРЕТ
Бумага, карандаш, 22,5×21,5
(Фонд Союза художников СССР)

ПОРТРЕТ СТАРОЙ ЕВРЕЙКИ
Бумага, карандаш, 10×12

МАША
Бумага, карандаш, 17×15

ГРУШИ
Бумага, карандаш, 34×30

ПРОФИЛЬ
Бумага, карандаш, 14,5×13

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

1974

ԾԱՄՈՎ ԱՂՋԻԿԸ
Թուղթ, մատիտ, 20×17

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ
Թուղթ, գուն. մատիտ, 34×29
(ՍՍՀՄ նկարիչների միության ֆոնդ)

ՎԵՐԱՅԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
Թուղթ, մատիտ, լաք, 13,5×21,5
(ՍՍՀՄ նկարիչների միության ֆոնդ)

ՍԵՎԱ
Թուղթ, մատիտ, 10×10

1975

ԴԵՐԱՍԱՆ Ե. ԵՎՍՏԻԳՆԵԵՎԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
Թուղթ, գուն. մատիտ, 31×36

ԱՂՋԿԱ ԴԻՄԱՆԿԱՐ
Թուղթ, մատիտ, 9×11

1976

ՁԿՆԵՐՈՎ ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ
Թուղթ, մատիտ, 39×41
(Գ. Թարվերդյանի սեփ., Երևան)

ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ
Թուղթ, մատիտ, 35,5×30

ԹՂԹԵ ՀՐԵՇՏԱԿՈՎ ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ
Թուղթ, մատիտ, 28,5×21,5
(Գ. Թարվերդյանի սեփ., Երևան)

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ ՆԱՏԱԼՅԱ ՍԱՅԿՈՅԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
Թուղթ, գուն, մատիտ, 23×17

ԼԵՋՎԱԲԱՆ Մ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
Թուղթ, մատիտ, 16×14

ՄԵՐԿ ԿԻՆԸ
Թուղթ, գուն. մատիտ, 31×27
(Ժան Տեր-Մերկերյանի սեփ., Երևան)

ՀՈՒԴԻԹ
Թուղթ, մատիտ, 32×27
(Գ. Թարվերդյանի սեփ., Երևան)

ԾԱՂԻԿՆԵՐ
Թուղթ, մատիտ, 33×30
(Գ. Թարվերդյանի սեփ., Երևան)

1974

ДЕВУШКА С КОСОЙ
Бумага, карандаш, 20×17

МОЛОДОСТЬ
Бумага, цв. карандаш, 34×29
(Фонд Союза художников СССР)

ПОРТРЕТ ВЕРЫ
Бумага, карандаш, лак, 13,5×21,5
(Фонд Союза художников СССР)

СЕВА
Бумага, карандаш, 10×10

1975

ПОРТРЕТ АКТЕРА Е. ЕВСТИГНЕЕВА
Бумага, цв. карандаш, 31×36

ПОРТРЕТ ДЕВУШКИ
Бумага, карандаш, 9×11

1976

НАТЮРМОРТ С РЫБАМИ
Бумага, карандаш, 39×41
(Соб. Г. Тарвердяна, Ереван)

АВТОПОРТРЕТ
Бумага, карандаш, 33,5×30

НАТЮРМОРТ С БУМАЖНЫМ АНГЕЛОМ
Бумага, карандаш, 28,5×21,5
(Соб. Г. Тарвердяна, Ереван)

ПОРТРЕТ АКТРИСЫ НАТАЛЬИ САЙКО
Бумага, карандаш, 23×17

ПОРТРЕТ ЛИНГВИСТА М. МЕЛКУМЯНА
Бумага, карандаш, 16×14

ОБНАЖЕННАЯ
Бумага, цв. карандаш, 31×27
(Соб. Жана Тер-Меркеряна, Ереван)

ЮДИФЬ
Бумага, карандаш, 32×27
(Соб. Г. Тарвердяна, Ереван)

ЦВЕТЫ
Бумага, карандаш, 33×30
(Соб. Г. Тарвердяна, Ереван)

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

1977

ԱՂՋԿԱ ԴԻՄԱՆԿԱՐ
Թուղթ, մատիտ, 21×18
(Թ. Սալախովի սեփ., Մոսկվա)

ՍԱԼՈՄԵ
Թուղթ, մատիտ, 24×19

ԼԵՋՎԱԲԱՆ Մ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
Ստվարաթուղթ, սեպիա, 64×52
(Ժամանակակից արվեստի թանգարան, Երևան)

ԿՆՈՋ ԴԻՄԱՆԿԱՐ
Թուղթ, գուն. մատիտ, 25×21

1978

ԱՆԱՏՈԼԻ ԲՈՉԱՐՈՎԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
Ստվարաթուղթ, սեպիա, 62×52

ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ
Ստվարաթուղթ, սեպիա, 46×46

ԱԲՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ (Ավ. Իսահակյանի պոեմի մոտիվներով)
Ստվարաթուղթ, սանգին, 78×58
(Ժամանակակից արվեստի թանգարան, Երևան)

ՖՐԱՆՉԵՍԿԱՆ
Ստվարաթուղթ, սեպիա, 60×47
(Գ. Թարվերդյանի սեփ., Երևան)

ԿԻՆՈՌԵԺԻՍՈՐ Մ. ՇՎԵՅՑԵՐԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
Ստվարաթուղթ, սեպիա, 63×54

ՀՈՎՀԱՆՆԵՍԸ
Ստվարաթուղթ, սեպիա, 46×57
(Ժամանակակից արվեստի թանգարան, Երևան)

ՊԱՐՄԱՆՈՒՀԻ
Ստվարաթուղթ, սանգին, 70×55

1977

ПОРТРЕТ ДЕВУШКИ
Бумага, карандаш, 21×18
(Соб. Т. Салахова, Москва)

САЛОМЕЯ
Бумага, карандаш, 24×19

√ ПОРТРЕТ ЛИНГВИСТА М. МЕЛКУМЯНА
Картон, сепия, 64×52
(Музей современного искусства, Ереван)

ЖЕНСКИЙ ПОРТРЕТ
Бумага, цв. карандаш, 25×21

1978

√ ПОРТРЕТ АНАТОЛИЯ БОЧАРОВА
Картон, сепия, 62×52

АВТОПОРТРЕТ
Картон, сепия, 46×46

√ АБУ ЛАЛА МААРИ (по мотивам поэмы Ав. Исаакяна)
Картон, сангина, 78×58
(Музей современного искусства, Ереван)

ФРАНЧЕСКА
Картон, сепия, 60×47
(Соб. Г. Тарвердяна, Ереван)

√ ПОРТРЕТ КИНОРЕЖИССЕРА М. ШВЕЙЦЕРА
Картон, сепия, 63×54

√ ОВАНЕС
Картон, сепия, 46×57
(Музей современного искусства, Ереван)

ЮНАЯ
Картон, сангина, 70×55

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

БИБЛИОГРАФИЯ

Выставка радости – „Гракан терт", Ереван, 1962, 23 февраля (1 репрод.), на арм. яз.

1. ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ:— «Գրական թերթ», Երևան, 1962, 23 փետրվարի (1 վերատպ.)

2. ԴԱՎՈՅԱՆ Ռ. Давоян Р.
ՎԵՐԱԾՆՈՒՆԴ:— «Հայրենիքի ձայն», Երևան, 1965, 17 հոկտեմբերի (1 վերատպ.) Возрождение, „Айренки дзайн"

3. ԳԾԻ ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆԸ:— «Հայրենիքի ձայն», Երևան, 1972, 13 սեպտեմբերի (2 վերատպ.) Привлекательность линии

4. ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԳԾԱՆԿԱՐԻ ՆՈՐ ՇՈՒՆՉԸ:— «Սովետական արվեստ»: Երևան, 1974, № 5 (5 վերատպ.) Новое дыхание рисунка, „Советакан арвест"

5. Շ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎԵՐԱԴԱՐՁ ԲԱՐՁՐԱՆԱԼՈՎ.— «Արև», Կահիրե, 1974, 25 հունվարի, (2 վերատպ.) Возвращение – восхождение „Арев", Каир

6. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԲՆՈՐԴԻ ՆԵՐԱՇԽԱՐՀԻ ՃՇՄԱՐԻՏ ՀՈԳԵԲԱՆԸ:— «Ավանգարդ», Երեվան, 1979, 7 սեպտեմբերի (2 վերատպ.): Глубокое проникновение правдиво раскрывает душу человека, „Аванград"

7. ԴԱՆԻԵԼ ԴԶՆՈՒՆԻ
ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆ. Հայ կերպարվեստագետներ (համառոտ բառարան):— «Լույս» հրատարակչություն, Երևան, 1977, էջ 207.: Рудольф Хачатрян. Армянские живописцы (Краткий словарь), изд-во „Луйс"

*
* *

1. В ВЕНЕ ТРЕТЬЮ ПРЕМИЮ ПОЛУЧИЛ ХУДОЖНИК ИЗ ЕРЕВАНА. — «Коммунист», Ереван, 1959 г., 11 августа.

2. Художники к 40-летию Армянской ССР
«ВСТАВАЙ, ПРОКЛЯТЬЕМ ЗАКЛЕЙМЕННЫЙ!»—«Коммунист, Ереван, 1960, 4 ноября (1 репр.).

3. ИЛЛАРИОН ГОЛИЦЫН

ВАШЕ МНЕНИЕ? — «Творчество», Москва, 1971, № 1 (3 репр.).

4. МАЙ МИТУРИЧ
ВАШЕ МНЕНИЕ? — «Творчество», Москва, 1971, № 1.

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

5. ДМИТРИЙ БИСТИ
ВАШЕ МНЕНИЕ? — «Творчество», Москва, 1972, № 4.

6. Ю. РУДНИЦКАЯ
ВАШЕ МНЕНИЕ? — «Творчество», Москва, 1972, № 4.

7. ВАШЕ МНЕНИЕ?
Обзор откликов. — «Творчество», Москва, 1972, № 5.

8. Т. ЗУРАБЯН
Чудо жизни. Кредо Рудольфа Хачатряна — «Вестник Армении», Нью-Йорк, 1972, 15 августа (2 репр.).

9. Т. ЗУРАБЯН
Чудо жизни. Кредо Рудольфа Хачатряна. — «Армянский еженедельник», Нью-Йорк, 1972, 22 июня (1 репр.).

10. Д. НАЛБАНДЯН.
(Народный художник СССР)
Сила убежденности. — «Правда», Москва, 1972, 25 марта.

11. БУКЛЕТ. РУДОЛЬФ ХАЧАТРЯН. — Ереван, 1973, Издание Дома художника Армении.

12. АКИМОВА Л.
НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОЙ СТАНКОВОЙ ГРАФИКИ. (На всесоюзной юбилейной выставке «СССР — наша Родина». — «Искусство, 1973, № 7, стр. 6 (1 репр.).

13. РУДОЛЬФ ХАЧАТРЯН. Каталог (автор текста Н. Степанян). — Изд. «Советский художник», Москва, 1979 (24 репр.).

14. Л. БЕЛОГОРЛОВА
РИСУНКИ РУДОЛЬФА ХАЧАТРЯНА. — «Искусство», Москва, 1979, № 9, стр. 30—36 (12 репр.).

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ռուդոլֆ Լորիսի Խաչատրյանը ծնվել է 1937 թվականի մարտի 4-ին Երևանում, ծառայողի ընտանիքում: Նկարել սկսել է մանուկ հասակից, իսկ 18 տարեկանից արդեն իր գրաֆիկական աշխատանքներով մասնակցում էր հանրապետական ցուցահանդեսներին:

Ռուդոլֆ Խաչատրյանը լրջորեն ուսումնասիրել է համաշխարհային արվեստի վարպետների, մասնավորապես՝ Ռեմբրանդի և Ալբրեխտ Դյուրերի ստեղծագործությունները: Աշակերտել է ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Երվանդ Քոչարին, որը մեծ ազդեցություն է թողել երիտասարդ նկարչի ստեղծագործական անհատականության և գեղարվեստական սկզբունքների ձևավորման վրա:

1957 թվականին ինքնուս նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսին ներկայացրած աշխատանքի համար Ռ. Խաչատրյանը արժանանում է բրոնզե մեդալի:

1959 թվականին «Ուսանողուհու դիմանկարը» աշխատանքի համար Ռ. Խաչատրյանը արժանանում է Վիեննայի երիտասարդական համաշխարհային 7-րդ փառատոնի դափնեկրի կոչման և պրգևատրվում բրոնզե մեդալով:

Հետագա տարիներին Ռ. Խաչատրյանը գրաֆիկային կուգընթաց ստեղծում է գեղանկարչական գործեր: Անընդմեջ մասնակցում է հանրապետական, համամիութենական և միջազգային (ԳԴՀ, Լեհաստան, Չեխոսլովակիա, Բուլղարիա, Իտալիա, Ֆրանսիա, Անգլիա, ԱՄՆ) ցուցահանդեսների:

1960 թվականից նա Հայաստանի նկարիչների միության անդամ է:

1965 թվականին «Ծաղկիր իմ հանրապետություն» մրցութային ցուցահանդեսում «Մայրություն» և «Երիտասարդություն» կտավների համար արժանանում է արծաթե մեդալի:

1966 թվականին նա մասնակցում է Պրագայում կազմակերպված «Հայրենիքը հայ նկարիչների ստեղծագործություններում» ցուցահանդեսին:

1969 թվականին «Կոմիտասի դիմանկարը» գրաֆիկական աշխատանքի համար, մեծ կոմպոզիտորի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսում, արժանանում է Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության առաջին մրցանակին:

1970 թվականին մասնակցում է Փարիզում (Լուվր) կազմակերպված «Ուրարտուից մինչև մեր օրերը» ցուցահանդեսին:

1977 թվականին Ռուդոլֆ Խաչատրյանին շնորհվում է Հայկական ՍՍՀ վաստակավոր նկարչի կոչում:

1978 թ. Մոսկվայում, իսկ 1979 թվականին Լենինգրադում և Օդեսայում կազմակերպվում են Ռ. Խաչատրյանի անհատական ցուցահանդեսները:

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

БИОГРАФИЧЕСКАЯ СПРАВКА

Рудольф Лорисович Хачатрян родился 4 марта 1937 года в Ереване, в семье служащего.

Рисовать стал с раннего детства и уже в возрасте 18 лет участвует на республиканских выставках графическими работами.

Рудольф Хачатрян глубоко изучал произведении мастеров мирового искусства, в частности Рембрандта и Альбрехта Дюрера. Занимался у народного художника СССР Ерванда Кочара, который оказал огромное воздействие на формирование эстетических взглядов и художественных принципов молодого художника.

В 1957 г. Р. Хачатрян участвует на выставке художников-самоучек. За графические работы, представленные на выставке, удостаивается бронзовой медали.

В 1959 г. на Международной выставке изобразительного искусства открывшейся в Вене в связи с VII Всемирным фестивалем молодежи, Р. Хачатрян удостаивается звания лауреата и награждается бронзовой медалью за работу «Портрет студентки».

В последующие годы Р. Хачатрян создает, наряду с графическими работами, живописные полотна.

Систематически участвует на республиканских, всесоюзных и международных выставках (ГДР, Польша, Чехословакия, Болгария, Италия, Франция, Англия, США).

С 1960 г. Р. Хачатрян — член Союза художников Армении. В 1965 г. на республиканской фестивальной выставке «Цвети моя республика» за полотна «Материнство» и «Молодежь» получает серебряную медаль.

В 1966 г. участвует на организованной в Праге выставке «Родина в произведениях армянских художников».

В 1969 г. за графический портрет Комитаса, показанный на выставке посвященной 100-летию со дня рождения великого армянского композитора Комитаса, получает I премию Министерства культуры Армянской ССР.

В 1970 г. участвует на выставке «От Урарту до наших дней», организованной в Париже (Лувр).

В 1977 г. Рудольфу Хачатряну присвоено звание заслуженного художника Армянской ССР.

В 1978 г. состоялась персональная выставка Р. Хачатряна в Москве, а в 1979 г. в Ленинграде и Одессе.

80 годовой

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Շապիկի վրա՝ Ռ. Խաչատրյանի «Ինքնադիմանկար» (դրվագ) աշխատանքը, 1978

Կատալոգը կազմեց
ԱՍՏՂԻԿ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԸ

Գեղ. խմբագիր՝ Ա. ՏՈՆԻԿՅԱՆ
Նկարիչ՝ Խ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Տեխն. խմբագիր՝՝ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ
Սրբագրիչ՝ Վ. ՊԱՆՉՈՅԱՆ

Գինը 60 կոպ.

ՎՖ 06036 Պատվեր 373 Տպաքանակ 1000

Հանձնված է շարվածքի 30/I 1980 թ.:
Ստորագրված է տպագրության 27/II 1980 թ.:

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65:

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

На обложке: работа Р. Хачатряна «Автопортрет» (фрагмент), 1976 г.

Каталог составила

Астхик СТАМБОЛЦЯН

Худ. редактор А. ТОНИКЯН
Художник Х. МУРАДЯН
Тех. редактор Т. АКОПЯН
Корректор В. ПАНЧОЯН

Цена 60 коп.

ВФ—06036 Тираж 1000. Заказ 373

Сдано в набор 30/I 1980 г.
Подписано к печати 27/II 1980 г.

Типография № 1 Госкомитета Армянской ССР
по делам издательств, полиграфии и книжной торговли.
Ереван, Алавердяна, 65.

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

60 коп.

Издание
Дома художника Армении

Ереван
1980

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Rudolf Khachatryan (1937–2007)

Rudolf Khachatryan Digital Archive · rudolfart.com

Rudolf Khachatrian

This file was downloaded from:
https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=en

Works by Rudolf Khachatryan © Heirs of Rudolf Khachatryan. Other texts, photographs and design © their respective authors. When using this material, please credit the source and link to the page above.

Рудольф Хачатрян (1937–2007)

Цифровой архив Рудольфа Хачатряна · rudolfart.com

Рудольф Хачатрян

Файл скачан со страницы:
https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-058?lang=ru

Произведения Рудольфа Хачатряна © наследники Рудольфа Хачатряна. Остальные тексты, фотографии и оформление © их авторы. При использовании материала укажите источник и ссылку на эту страницу.